ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

28. 03. 2018թ

N 59

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

Կից Ձեզ ենք ներկայացնում Ձորագյուղ համայնքի ղեկավարի 27.03.2018թ-ի թիվ 12-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

27.03.2018 թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 12-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ՝ 06-066-0004-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ 06-066-0005-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մ.Գաբրիելյանի անձնական դիմումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991թ. թիվ 1 որոշումը,<<Գուգարաց աշխարհ>> ՄՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով կադաստրային քարտեզի՝ 06-066-0004-0011 ծածկագրի տակ գտնվող 0.03513 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1929թ. կառուցված 67,04քմ. մակերեսով բնակելի տան, 1929թ. կառուցված 15,18քմ. մակերեսով անասնագոմի, կադաստրային քարտեզի՝ 06-066-0005-0001 ծածկագրի տակ գտնվող 0.03990 հա մակերեսով բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող հողամասի նկատմամբ՝ ճանաչել Մամիկոն Պարթևի Գաբրիելյանի /ծնվ.1959թ/, սեփականության իրավունքը:
2. Վերը նշված հողամասերը չեն գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն հակասում քաղաքաշինարարական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված 0. 03513 և 0.03990 հա հողամասերն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել և օրենքի ուժով ճանաչել Մամիկոն Պարթևի Գաբրիելյանի /ծնվ.1959թ/ սեփականության իրավունքը:
4. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
5. Կադաստրային քարտեզի՝ 06-066-0004-0011 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ձորագյուղ համայնք 1-ին փողոց,17-րդ բնակելի տուն:
6. Կադաստրային քարտեզի՝ 06-066-0005-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Ձորագյուղ համայնք 1-ին փողոց, 22-րդ հաղամաս:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

Համայնքի ղեկավար Ս. Հարությունյան

07300874